ՀԱՐՑԱԹԵՐԹ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի մարզային (քաղաքային)
փուլի – 2016թ.
(տևողությունը՝ 150 րոպե)

9-րդ դասարան

1. **Թվարկեք Վիկտորիա անվամբ աշխարհագրական չորս օբյեկտ և դրանց գտնվելու վայրը**……..…….. 2 միավոր
2. **Շարքից դուրս գրել Լատինական Ամերիկայի երկրները և ավելացնել ևս չորսը**……2 միավոր
   Կոնգո, Կուբա, ԱՄՆ, Չիլի, Չադ, Էկվադոր, Կանադա, Գվատեմալա
   Կատար, Վիետնամ, Պորտուգալիա, Գվինեա:
3. **Գտնել օրինաչափությունը և լրացնել գ) և դ) տողերը**…….. 2 միավոր
   ա) Չինաստան – Շանհայ – Պեկին
   բ) Թուրքիա - Ստամբուլ- Անկարա
   գ) Նիգերիա - ..... - .....
   դ) Ավստրալիա - ..... - .....
4. **Շարքից դուրս գրել ՀՀ տարածքի ծալքաբեկորավոր ծագման լեռները և ավելացնել ևս չորսը**……2 միավոր
   Գեղամա, Ծաղկունյաց, Պապաքարի, Միափորի,
   Վարդենիսի, Եղնախաղի, Վիրահայոց, Զավախքի, Սյունիքի
5. **Երկրագնդի ո՞ր կետն է երկրի կենտրոնին ավելի մոտ: Պատասխանը հիմնավորել, նշելով 2 պատճառ**……2 միավոր
6. **Որքա՞ն կլինի ջերմաստիճանը Ակոնկագուայի գագաթին, եթե նրա ստորոտին (ծովի մակերևույթից 500 մ-ի վրա) ջերմաստիճանը +30° է (հաշվարկը կատարել 6°-ով)**…… ……...1 միավոր
7. **Երկրի բնակչության թիվը 6 մլն է, բնական աճը՝ 15‰: Որքա՞ն կլինի բնակչության թվի բացարձակ բնական աճը**……..1 միավոր
8. **Տրված գետերից առանձնացնել Սևանա լիճ թափվողները**……1 միավոր
   Գետիկ, Գեղի, Արգիճի, Դարբ, Գավառագետ, Ջորագետ, Ջկնագետ,
   Եղեգիս, Մասրիկ, Մարց, Գեղարոտ, Ազատ:
9. **Շարքից առանձնացնել միապետությունները**……1 միավոր
   1) Ֆրանսիա, 2) Իսպանիա, 3) Ֆինլանդիա, 4) Քուվեյթ, 5) Իրաք,
   6) Ճապոնիա, 7) Դանիա, 8) Եգիպտոս
10. **Ի՞նչ կլինի, եթե՝** ……...2 միավոր
    1) Հայաստանում նավթի զգալի պաշարներ հայտնաբերվեն (նշել առնվազն 4 հետևանք)
    2) ՀՀ-ում օդի ջերմաստիճանը բարձրանա 2-3°-ով, իսկ մթնոլորտային տեղումները նվազեն 15-20%-ով (նշել առնվազն 4 հետևանք)
11. **Արևադարձային լայնություններում մթնոլորտային ճնշումը բարձր է: Ինչու՞: Բացատրե՛ք** ……2 միավոր
12. Նշել Հայաստանի Հանրապետության տնտեսաաշխարհագրական դիրքի դրական և բացասական կողմերը ……..……2 միավոր